

ՎԱՆԱԶՈՐԻ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԻ

2016թ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՍՅԱԿԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01.09.2016թ

Վանաձորի Օրհուս կենտրոնի գործունեության նպատակն է նպաստել շրջակա միջավայրի լավ կառավարման և համայնքային անվտանգության սկզբունքների ներդրմանը՝ Կենտրոնի միջոցով շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, տեղական և ազգային մակարդակներում աջակցելով ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Օրհուսի Կոնվենցիայի իրականացմանը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար չափազանց կարևոր է հանրության պատշաճ մասնակցությունը որոշումների կայացմանը, որը բնապահպանական լավ կառավարման, տեղական մակարդակում ժողովրդավարության հաստատման և համայնքային անվտանգության սկզբունքների ներդրման առանցքային հարցն է և պատահական չէ, որ դրան են ուղղված Օրհուսի կոնվենցիայի մյուս երկու սկզբունքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Օրհուս կենտրոնների առաքելությունն է՝ աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը համատեղ ուժերով լուծել բնապահպանական հիմնախնդիրները, ամրապնդելով պետական մարմինների և ՔՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունները, գործունեության իրականացման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն գործողություններին, որոնք ուղղված են հանրության իրազեկության և որոշումների կայացման գործընթացին մասնակցության մակարդակի բարձրացմանը: Կենտրոնը հարթակ է հանդիսանում պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ հանդիպելու, քննարկելու, տեղեկատվություն փոխանակելու, շրջակա միջավայրի և բնապահպանական անվտանգությանը վերաբերող հարցերի շուրջ երկխոսություն ծավալելու և լուծման ուղիներ գտնելու համար: Հաշվի առնելով, որ միայն հասարակության իրազեկումը այս կամ այն նախագծի վերաբերյալ, դեռևս բավարար չէ հանրության ակտիվ մասնակցություն ապահովելու համար, առավել ուշադրություն ենք դարձրել շրջակա միջավայրում նախատեսված գործողությունների արդյունքում սպասվելիք փոփոխությունների վերաբերյալ հանրությանը նախապես իրազեկելու, ամբողջական տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ տարվող աշխատանքներին, համապատասխան հանրային կարծիքի ձևավորմանն ու այլընտրանքային առաջարկությունների համատեղ մշակմանը:

Մինչ այժմ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից ֆինանսավորումը թույլ է տվել իրականացնել ինչպես ցպահանջ գործունեություն, այնպես էլ նախապես պլանավորված և փորձագետների խորհրդի անդամների հետ համաձայնեցված

ինքնուրույն գործունեություն՝ թրեյնինգներ, դասընթացներ, քննարկումների կազմակերպում և իրականացում, կլոր սեղաններ: 2016 թ-ի 1-ին կիսամյակում՝ հունվարի 1-ից մինչև օգոստոսի 31 ընկած ժամանակահատվածում կենտրոնը չի ստացել ֆինանսավորում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից և գործել է առանց որևէ ֆինանսավորման: Նշված ժամանակահատվածում կենտրոնի կողմից իրականացվել է հետևյալ գործունեությունը:

Հ/Հ	Իրականացված միջոցառումները	Նպատակը և արդյունքները
26/04/2016	«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության, ինչպես նաև 3-րդ գործողությունների ծրագրի մշակման գործընթացի վերաբերյալ քաղաքացիական հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից Վանաձորում իրականացվող հանդիպմանը կազմակերպչական և տեխնիկական աջակցություն	ՀԿ-ին և ակտիվ քաղաքացիներին իրազեկել Բաց կառավարման գործընկերության նախաձեռնության հայաստանյան գործընթացների մասին, նաև ներգրավել դրանց ԲԿԳ Գործողությունների երրորդ ծրագրի մշակման գործընթացում:
24/06/2016	«Տեղական մակարդակում Կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների պլանի մշակում Լոռու մարզի Մարգահովիտ և Մեծ Պարնի համայնքների համար» ծրագրի շրջանակներում Վանաձորում կլոր սեղան-քննարկման կազմակերպչական և տեխնիկական աջակցություն:	Արդյունավետ համագործակցության ապահովում, Կենտրոնի առաքելության իրականացում: Տեղեկատվության մատչելիություն, որոշումների ընդունմանը մասնակցություն, կենտրոնում տեղեկատվության համալրում
Մայիս – Հուլիս 2016	Վանաձորում ՌԵԿ Կովկաս հիմնադրամի կողմից իրականացվող Կանաչ ակումբներին մասնակցություն և կազմակերպչական աջակցություն	Արդյունավետ համագործակցության ապահովում, Կենտրոնի առաքելության իրականացում: Տեղեկատվության մատչելիություն, որոշումների ընդունմանը մասնակցություն, կենտրոնում տեղեկատվության համալրում
հուլիս 2016	Հարցազրույց Լոռի ԹիՎի հեռուստարձևերությանը՝ նվիրված հանքարդյունաբերության առողջապահական և բնապահպանական ազդեցություններին:	Կարևորել շրջակա միջավայրի պահպանությունը, տեղեկատվության մատչելիություն: Արդյունավետ համագործակցություն ԶԼՄ-ների հետ

Հուլիս 2016	Շողեր սոցիալական կենտրոնին հիդրոմոնիթորինգի դասընթացի կազմակերպման աջակցություն: Սարքերի տրամադրում և տեղեկատվական աջակցություն:	Բնապահպանական խնդիրների քննարկում, տեղեկատվության փոխանակում, աջակցություն էկոկրթությանը:
29 Հուլիս, 2016	Մասնակցություն և կազմակերպական աջակցություն Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն (ՌԱՄԱ) 5րդ ֆորումին:	Արդյունավետ համագործակցության ապահովում, Կենտրոնի առաքելության իրականացում: Տեղեկատվության մատչելիություն, որոշումների ընդունմանը մասնակցություն, կենտրոնում տեղեկատվության համալրում
9 Օգոստոս, 2016	Մասնակցություն Լոռու մարզում աղբավայրերի կառավարման ռազմավարական մոտեցումների հանրային լսմանը:	Մասնակցություն որոշումների ընդունման գործընթացին
25 Հուլիսից 31 Օգոստոս, 2016	Կենտրոնի հետ կամավոր աշխատել է Դեպի Հայք հիմնադրամի կամավոր Դեա Հովհաննիսյանը:	Համագործակցություն, կենտրոնի գործունեության արդյունավետության բարձրացում և ծանրաբեռնվածության նվազում
26 Օգոստոս 2016	Վանաձորում հատված եղնիների իրավական բաղադրիչի վերաբերյալ կլոր սեղան քննարկման կազմակերպում:	Համագործակցություն ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և Տնտեսաիրավական հետազոտությունների կենտրոն ՀԿ հետ, իրավախորհրդատվության հասանելիություն վանաձորյան ՀԿների և հետաքրքրված անձանց համար, տեղեկատվության մատչելիություն:

Վանաձորի Օրհուս կենտրոնը համագործակցել է հետևյալ կառույցների ներկայացուցիչների հետ.

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, Տնտեսաիրավական հետազոտությունների կենտրոն ՀԿ, Դեպի Հայք հիմնադրամ, Լոռու մարզպետարանի բնապահպանության և գյուղատնտեսության վարչություն, Վանաձորի քաղաքապետարան, Կովկասի ռեգիոնալ էկոլոգիական կենտրոն, Հայկական Կարմիր խաչի Լոռու մարզի մասնաճյուղ, Հայկական կանաչ խաչ ՀԿ, Շողեր սոցիալական կենտրոն, Լոռի ԹիՎի հեռուստաընկերություն, լրագրողներ:

Վանաձորի Օրհուս կենտրոնը չունի գործունեության մշտական վայր: Այս պատճառով կենտրոնի գրադարանը, Ինտերնետը և տեխնիկական հնարավորությունները հասանելի չեն հանրության համար:

Պերճ Բոջուկյան

Կոնտակտային անձ,

«Վանաձորի Օրհուս կենտրոն»

Հեռ: 077723388

Էլ. Փոստ: bojukyanp@gmail.com